

ԸՆԴՀԱՆՈՒՍՈՒԹՅՈՒՆ - ԿԱՐԾԻՔ

ՆԱԼԻ ԲԱԿՈՒՐԻ ԳԱՍՏՑԱՆԻ «ԱԶԳԱՑԻՆ ԻՆՋՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ 20-ՐԴ ԳՐԻ
ԱՄՆՐԻԿԱՀԱՅ ԱՆԳՎԻՍԳԻՐ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՄ» ԹԵՆԿԱԾՈՒՄԿԱՆ
ԱՏՆԱԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՔԵՐՑԱԼ

Հայաստանի և հայրության մասնատման, մեր հայրենիքի տարածքային ու ազգային հոգևոր – մշակութային ժառանգության աստիճանական օտարման ու յուրացման գործընթացը նորություն չէ. Յեղասպանության և հայերիս հայրենագրկման հետևանքով հայկական սփյուռքի ձևավորումից հետո, հատկապես նորագույն ժամանակներում, մեր ազգային հարստության բացահայտ գոյություն գործընթացն ավելի է առարկայացել: Աշխարհի տիրակալները նախորդ դարերում չբավարարվեցին պետականությունը կորցրած, խանական Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև բաժանված Հայաստանի մի մասը Պարսկահայաստան կամ Արևելահայաստան, իսկ 1828-ից հետո՝ նաև Ռուսահայաստան, իսկ մյուս մասը՝ Տաճկահայաստան, Թուրքահայաստան կամ լավագույն դեպքում Արևմտահայաստան անվանումներով: Հայ հանրային ու գեղարվեստական միտքը մասնատված էր և ենթակա՝ տիրապետող պետությունների լեզվաբարձրականության քմահաճույքներին: Հետցեղասպանության շրջանում արդեն ձևավորված հայ գաղթավայրերում, իբրև գոյապայքարի և ազգային ինքնության դրսևորման ու պահպանման ձևերից մեկը, մայրենիով ստեղծագործողների կողքին պատմական անհրաժեշտության թելադրանքով ի հայտ եկան նաև օտարագիր հայ գրողները՝ անգլիագիրները՝ Ամրիկայում և անգլիախոս երկրներում, ֆրանսագիրները՝ Ֆրանսիայում ու ֆրանսախոս երկրներում, իսպանագիրները՝ Իսպանիայում ու Հարավային Ամերիկայի իսպանախոս երկրներում, արաբագիրները՝ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների հայ գաղութներում, ռուսագիր հայ գրողները՝ Ռուսաստանում: Բոլորովին այլ էր իրավիճակը հայոց ողբերգության գլխավոր մեղավոր Թուրքիայում, որտեղ 14-րդ դարից օտարախոս հայերի համար ի հայտ եկան հայատառ թուրքերենով հրատարակված առաջին նմուշները, իսկ 17-20-րդ դդ. 250 տարվա ընթացքում տպագրվել են շուրջ 2 500 անուն տարաբնույթ գրքեր, բազմաթիվ պարբերականներ, համաշխարհային դասականների շուրջ 500 թարգմանական երկեր, որոնցով թուրքական իրականության մեջ սկիզբ դրվեցին նաև մամուլին ու լուստրոնին:

Սերնդեսերունդ ամենուր շարունակվող գործընթացն այսօր էլ անուրանալի դրականի հետ միասին, ցավոք, տեսանելի և անտեսանելի վնասներ է բերում գաղթավայրերում հայապահպանությանն ու մեր ազգային ինքնությանը:

Օտարագիր հայ գրողներն իրենց ապրած երկրներում, ազգային - կրոնական ու լեզվամշակութային նոր միջավայրից բացի, ունեցել են և ունեն տարբեր կենսապայմաններ՝ տնտեսական, քաղաքական, ընկերային, կենցաղային և այլն, ու ստեղծագործելու տարբեր հնարավորություններ: Բնական է, տիրապետող երկրի զարգացվածության աստիճանով ու մակարդակով, տեղական առանձնահատկություններով և վերաբնակ հայության կարգավիճակով պայմանավորված՝ տարբեր պիտի լինեին նաև գրողների աշխարհայացքը, գաղափարական ու զեղազիտական նպատակադրումները, սակայն գրեթե նույնական են եղել գոյաբանական ու ազգային ինքնության պահպանման խնդիրներն ու հեռանկարները: Փաստորեն, հայրենիքից հեռու հայրենագրված հայությունը տարբեր գաղթավայրերում ձևավորել է սփյուռքահայ գրականության փոքրիկ կղզյակներ, որոնցում մայրենի լեզվով ստեղծագործողների հետ միասին հանդես են եկել նաև օտարագիր հայ գրողներ, որոնք մի կողմից՝ օտար մշակույթն են հարստացրել իրենց ստեղծագործություններով, մյուս կողմից՝ օտար լեզուներով զեղարվեստականացրել են ինչպես իրենց հասովածի հայության կյանքն ու օրախնդիր հարցերը՝ օտարներին ծանոթացնելով հայության մտահոգություններին, այնպես էլ՝ ազգայինի հետ միասին համամարդկային խնդիրներ արծարծող թե՛ հայալեզու և թե՛ օտարալեզու բարձրարվեստ գրականություն են ստեղծել:

Սփյուռքի խոշորագույն հայ գաղութներից մեկում՝ ԱՄՆ-ում, որ երկրորդն է Ռուսաստանից հետո հայերի քանակությամբ, ժամանակի ընթացքում այսպես է ձևավորվել ամերիկահայ գրականությունն իր երկու թևերով. մայրենիով ստեղծագործողների կողքին, նույն պատմական անհրաժեշտությամբ ասպարեզ եկել ու մեծ հեղինակություն են ձեռք բերել անգլիագիր հայ գրողները՝ բանաստեղծներ, արձակագիրներ, թատերագույններ ու հրապարակախոսներ: Ամերիկյան միջավայրում պետական ու հանրային կառույցներում հայ համայնքի ինտեգրման հետ միաժամանակ, ձուլման վտանգին դիմակայելը, սովորական ազգային ինքնությունը գոյապայքարով պահպանելն ու ինքնահաստատվելը բոլորի համար էլ գլխավոր մտահոգություն է և հիմնաթեմա՝ ստեղծագործողների համար: Այս կենսոլորտում են հաջողության հասել ու հռչակի արժանացել ամերիկահայ արվեստագետները՝ անգլիագիր արձակագիրներ՝ Վիլյամ Սարոյանը, Մայքլ

Առկնը, Լ.-Չ. Սուրմեյանը, Փիթեր Բալաքյանը, Փիթեր Սուրյանը, Դավիթ Խոյյանը, Նենսի Գրիգորյանը և ուրիշներ, որոնց ստեղծագործություններում ազգային ինքնության գոյաբանական խնդրի արծարծումներին ու արտացոլման ուսումնասիրմանն է նվիրված Ն. Բ. Գալստյանի սույն ատենախոսությունը՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական ատախճանի հայցման համար:

Ամերիկյան գրականությունը, Լ. -Չ. Սյուրմեյանի դիպուկ ընդորոշումով, ստեղծել են «ոչ - ամերիկացի ամերիկացիները», այսինքն՝ Ամերիկայի բաղադրացիներ, ամերիկյան խառնարանում ապրած տարագրի արվեստագետները, որոնք կա՛մ ծնվել են Ամերիկայում, կա՛մ տեղավորվել են այնտեղ՝ ապրելու և ստեղծագործելու: Եվ ամերիկյան գրականության մեծերի ազգային պատկանկությունը բնավ էլ ամերիկյան չէ՝ անգլիացիներ են, իռլանդացի, ֆրանսիացի, իսպանացի, պորտուգալացի, հայ և այլն:

17-րդ դարից իր կենսագործունեությունն Ամերիկայում սկսած և այսօր շուրջ մեկ միլիոն ու մի բանի հարյուր հազարանոց հայ գաղութը իր անուրանալի ներդրումն ունի ամերիկյան տեղեկական, բաղադրական, գիտական ու գրական-մշակութային կյանքում:

Առաջ անգնելով ասենք, որ գիտական աստիճանի հավակնորդը, անզլերենով, հայերենով, ուսերթվով ուսումնասիրել է մեծ ծավալի գեղարվեստական ու գիտատեսական գրականություն, պարբերական մամուլ ու էլեկտրոնային – ինտերնետային կայքէջեր (ըստ գրականության գանձի՝ շուրջ 100 միավոր, որից 64-ը՝ միայն տարալեզու գրքեր ու մենագրություններ), ազնիվ տքնությամբ ստեղծել և հրապարակային պաշտպանության է ներկայացրել ամերիկյան անգլիագիր հայ արձակագիրների տարածմանը ստեղծագործությունները (վեպեր, վիպակներ, պատմվածքներ, հուշագրություններ, Էսսեներ) ընտղ ու արժևորող, արդի գրականագիտության ձեռքբերումներին և ՀՀ ԲԻԿ-ի պահանջներին ու չափանիշներին լիովին համապատասխան իրոք լուրջ ու ծանրակշիռ աշխատանք, որը գրականության գանձի հետ միասին կազմում է 164 էջ:

Մեր ասածը հիմնավորելու համար մատնանշենք ատենախոսության գիտական բազում արժանավորություններից գոնե մի քանիսը:

Ակետը նրանից, որ ատենախոսությունը կուռ կառուցվածք ունի, որի չորս գլուխներն ընդգրկում են քննարկվող հարցադրումների ամբողջությունը, իսկ եզրակացությունները բխում են մասնագիտորեն գրագետ շարադրանքից և հստակորեն ներկայացնում են ուսումնասիրության արդյունքները:

Գրողներից յուրաքանչյուրը, որոնց ստեղծագործությունները դիտարկված են ատենախոսության մեջ, իսկապես մեծ ծավալի և կարևորության գրական ժառանգություն են ստեղծել և արժանացել կամ արժանանալու են առանձին ուսումնասիրության: Անհնար է այդ ամենն րնդգրկել մեկ ուսումնասիրության սահմաններում: Դիտարկվող անգլիագիր հայ գրողների համոզեալ անտարբեր չի եղել գրական միտքը, նրանց ստեղծագործությունները, անշուշտ, գրականագիտական լուրջ քննության ու գնահատման արժանացել են առաջնորդում, սակայն ատենախոսության հեղինակն ամերիկահայ անգլիագիրների երկերը լինել է իր թեմայի պահանջներով ու գիտական նպատակների տեսանկյունից, որոնք հստակորեն ձևակերպված են հենց վերնագրում «Ազգային ինքնության թեման 20-րդ դարի» ամերիկահայ անգլիագիր գրողների արձակում»: Այսինքն՝ նրա քննության դաշտում են ոչ թե 20-րդ դ. անգլիագիր հայ գրողների արձակն ամբողջությամբ, այլ գերազանցապես ազգային ինքնության թեման արձարձող երկերը: Այս սահմանազատումն, ինչ խոսք, ենթադրում է հսկայական նյութի համակարգում և գրական երկերի դասակարգում: Քնական է, որ հայցորդը ներկայացրել է ամերիկահայ անգլիագիր գրողների սարքեր սերունդների, որոնց գեղարվեստական մտածողությունը զարգացել է ամերիկյան ընդհանուր գրական մթնոլորտի ու ճաշակի, ժամանակի և գաղութահայ կյանքի փելադրանքների համապատասխան:

Նկատության մեջ թեմայի արդիականությունը, ատենախոսության գիտական նորույթը, ուսումնասիրության սահմաններն ու մեթոդաբանությունը, նպատակներն ու խնդիրները, նրա գիտատեսական ու զարժնական նշանակությունը համառոտակի բնորոշելով՝ հեղինակը չորս զուխներում ներկայացրել է բուն աշխատությունը՝ վերը նշված համակարգումով հարակցություններով ու զրականության ցանկով:

Հասուն գրականագետի ընդգրկուն հայացքով, կենսական փաստերի և գեղարվեստական պատկերի մեջ դրանց արտացոլման ճշմարտացիությունը բացահայտելու սկզբունքով են դիտարկված այնպիսի նուրբ ու բարդ խնդիրներ, ինչպիսիք են՝ գեղարվեստական երկերում արձարձված ազգային ինքնության թեմայի, օտար միջավայրում հայապահպանման, ցեղասպանության չսպիացող, ժամանակ առ ժամանակ նորոգվող վերքը, վիրավորանքն ու կորուսյալ հայրենիքի՝ սերնդեսերունդ փոխանցվող պատմական ցավագին հիշողությունը, պահանջատիրոջ իրավունքն ու ինքնաճանաչողությամբ և արժանապատվությամբ դեպի ազգային արմատներ վերադարձի պատկերումը եղել է անգլիագիր հայ գրողների հիմնախնդիրներից մեկը: Սրան զուգադրվում է

ամերիկյան միջալայրին ինտեգրվելով՝ իրեն հայ ու մարդ գգալու, իր հոգու գավի նիչև ու ապագակը լսելի պարձնելու և իր տեղը գտնելու որոնումները գեղարվեստի միջոցներով արտահայտելը:

Պարզունակ կլիներ, եթե հնդինակը տարբեր գրողներին միմյանցից կտրված ներկայացներ տարբեր գլուխներում, և մենք էլ այսօր ասեինք, թե այսինչ գլխում այս գլուխներն են ներկայացված, այնինչում՝ նրանք: Որքան էլ մտահոգությունները համընդհանուր են, սուրբեր են գլուխների անհատականություններն ու աշխարհընկալումը, կենսական երևույթները կարևորելով պատկերավոր ներկայացնելու կարողությունները: Արդարագի է, ասենք, «Վիյա»՝ Մարոյանին տարբեր գլուխներում ըստ քննարկվող հարցադրումների ներկայացնելը և այդ կապակցությամբ հաջորդ գրողների հետ նրա տարաբնույթ առնչությունները: Ըստ աստիճանի, որն իրականում վեր է սովորական ազդեցության մակարդակից և վերաճում է առնչության ավելի բարդ տեսակի՝ գրական ազգակցության:

Հայցորդի համոզիչ գիտական ընդհանրացումները ոչ միայն սեփական ուսումնասիրության սրբապիքն են, այլև նրա քաջահմուտ գիտական ղեկավարի՝ պրոֆ. Կ. Մատինյանի ուսուցողականների, ինչպես և հարցին անդրադարձած ամերիկահայ գրաքննադատների՝ մասնավորապես Օշին Քեյշիյանի և Ուիլյանի դիտարկումների արդյունքը, որոնցով կողմնորոշվել է հայցորդը: Ատենախոսության գլուխների վերնագրերը հենց այն կողմնորոշիչներն են, որոնցով առաջնորդվել է հեղինակն իր շահեկան աշխատությունը շարադրելիս: Սակայն բազմաշերտ հարցադրումները, ցավոք, ոչ միշտ են հստակորեն ձևավորված, որով էլ կասկածի կամ անորոշության տեղիք են տալիս: Կոսակում է հայցորդի միտքը, բայց ինչու՞ ձևակերպված չէ հստակ, որ ընթացողին տարակուսանքի մատնի: Ամենևին էլ չսեսմացնելով կատարված գնահատելի աշխատանքի արժանիքները՝ հայցորդի ուշադրությունն ենք հրավիրում վերնագրային ձևակերպումների և ներկու վիրիպումների վրա՝ հնարավորության դեպքում դրանք ավելի հստակեցնելու և աշխատանքի գիտական բարձր որակը կասկածելի չդարձնելու նպատակով: Օրինակ՝ «Ստաշին և երկրորդ գլուխների վերնագրերում անորոշ են մնում «հայ-ամերիկյան էթնիկ գրականություն» և «հայ-ամերիկյան գրականության հիմնախնդիր» հասկացությունները: Ավելի մշուշոտ է երրորդ գլխի՝ «Ազգային ինքնության պահպանման փնտրությունի իմաստը»-ը հայ-ամերիկյան գրականության մեջ» վերնագիրը հստակեցման ու ճշգրտման կարիք ունի: Դուրս է գալիս, որ հայ և ամերիկացի գրողները միավորվել են ու

հայ-ամերիկյան բիսնեսական գրականություն տեղից, մինչդեռ ամերիկացի հայ անգլիագիր գրողների ստեղծագործությունն այդպիսին չէ:

Կարծում եմ, որ հայցորդն աշխատանքը հրատարակության պատրաստելիս կգտնի իր միտքը առավել հստակ արտահայտող ձևակերպումներ:

Մեղմագրում և առենախոսության էջերում, քարեբախտաբար, գրեթե աննշան են համակարգչային վրիպակները: Սեղմագրի 5-րդ էջում ուղղակի «թոն» է **աշխատանք** բառի **ա** սկզբնատառը, տեղ-տեղ հանդիպում են **անգլիագիր** - **անգլագիր** գուգա-ձևությունները, որոնք պետք միօրնականացվեն: Բոլոր դեպքերում կպահանջվի առենախոսության նոր թնթեքում սրբագրիչի աչքով:

Աջվորվեց Վ. Բ. Գալստյանը հրատարակային պաշտպանության է ներկայացրել արդի գրական գիտության պահանջները բավարարող, հարուստ բովանդակությամբ, տեսականորեն նազեղված աշխատություն, որն ունի ինչպես տեսական, այնպես էլ գիտագործական կարևոր նշանակություն: Այս համոզումը մեզ հիմք է տալիս միջնորդելու ՀՀ ԲՈԿ-ի ԵԳՀ-ում լործող ժ. Օ1. 07 - «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությանը հաստիճանը շնորհող խորհրդին՝ Նելլի Բակուրի Գալստյանին «Ազգային ինքնության բնան շնորհ դարի ամերիկահայ անգլիագիր գրողների արձակում» առենախոսության համար շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա միանգամայն արժանի է:

ՊԵՏՏՈՒՆԻ ԵՆ ԸՆԴԴԻՄԱՄՈՒՄ՝

ՍՄՄԿԵԼ ՄՈՒՐՄԻՅԱՆ

Բան. գիտ. գոկտոր, պրոֆեսոր, ԵԳՀ ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության պատմության և գրակ. տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Գրոֆ. Ս. Մ. Գալստյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵԳՀ հայ գրականության ֆակուլտետի ղեկավար

Ա. Մ. ԳԱԼՍՏՅԱՆ

Բան. գիտ. թեկնածու, դոցենտ



17.11.2017